«ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷՊԻԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ՉՈՐՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

2012 թ. հոկտեմբերի 8–10-ը Ծաղկաձորում տեղի ունեցավ «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» չորրորդ միջազգային գիտաժողովը: Այն կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրություն ինստիտուտը: Առաջին երեքը հրավիրվել էին 2003, 2006, 2009 թվականներին՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և Հնագիտության և ազգագրության ինստիտուտների կողմից, հիմնականում Ա. Եղիազարյանի ջանքերով: Այդ գիտաժողովների նյութերը հրատարակվել են առանձին գրքերով:

Հայկական էպոսը և նրա՝ այլ ժողովուրդների վիպական ստեղծագործությունների հետ ունեցած առնչությունները վաղուց ի վեր քննարկվել են հայագիտական հրատարակություններում (ասելով «հայկական էպոս»՝ ի նկատի է առնվում ոչ միայն «Սասնա ծռերը», այլև հայ բանահյուսության վիպական բոլոր ստեղծագործությունները՝ ազգածին առասպել, «Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ»): Բայց և այնպես, պետք է նշել, որ համաշխարհային էպոսագիտության մեջ հայկական էպոսը դեռևս չի գրավում այն տեղը, որին արժանի է: Այն շատ ավելի քիչ է քննարկվում միջազգային գիտական շրջանակներում, քան, ասենք, թյուրքական, մոնղոլական, վրացական, կովկասյան էպոսները: Այս միջազգային գիտաժողովների անցկացումը, բացի մեր էպոսի առավել խոր և ժամանակակից մոտեցումներով ուսումնասիրման նպատակից, պայմանավորված է նաև այս հանգամանքով:

Նախորդ գիտաժողովները չեն ունեցել թեմատիկ ուղղվածություն՝ մասնակիցները խոսել են ըստ իրենց նախասիրած ուղղությունների և թեմաների: Հաշվի առնելով մեր տարածաշրջանի մշակութային կապերի բացահայտման խնդրի կարևորությունը՝ այս անգամ գիտաժողովը նվիրվել էր հայկական և կովկասյան ժողովուրդների էպոսներին ու դրանց միջև եղած կապերին: Գիտաժողովին իրենց մասնակցությունն էին բերել գիտնականներ հինգ երկրներից՝ Հայաստան, Վրաստան, Ռուսաստան, Հոլանդիա և ԱՄՆ: Մասնակիցների թվում էին գիտնականներ Կովկասի մի շարք ինքնավար հանրապետություններից՝ Աբխազիա, Ադիգեա, Դաղստան, Չեչնիա, Հյուսիսային Օսեթիա: Կար մեկ մասնագետ Ուդմուրտիայից (Վ. Նապոլսկիխ), որի զեկուցումը նվիրված էր ուրալյան և կովկասյան վիպական տեքստերի հնարավոր կապերին: Գիտաժողովի արտասահմանյան բոլոր մասնակիցները, բացի մեկից, գիտությունների դոկտորներ էին, շատերը ակադեմիկոսներ, գիտական հիմնարկների տնօրեններ և բաժնի վարիչներ: Այսպես, մասնակցում էին Սուփյան Մահոմադովը՝ *Չեչնիայի պատմության, մշակույթի և լեզվի ինստիտուտի տնօրենը,* Մահոմեդ Մահոմեդովը՝ *Դաղստանի հումանիտար ինստիտուտի տնօրենը,* Ցիրա Բարամիձեն՝ *Թբիլիսիի համալսարանի կովկասագիտության ինստիտուտի տնօրենը:*

*Գիտաժողովի թեմատիկայի տեսակետից հատկապես ուշագրավ էին հայկական էպոսի՝ վրացական և հյուսիսկովկասյան էպոսների առնչությունները քննարկող զեկուցումները (*Ե. Բեսոլովա, Մ. Մահոմեդով, Ա. Աջիև, Ս. Հարությունյան, Ա. Պետրոսյան, Լ. Ղռեջյան, Ա. Ղարիբյան*): Հայկական և վրացական էպոսների կապերը հայտնի են ու բավական քննարկված: Այսպես, վրացական էպոսի մեծ հերոս Ամիրանին շատ առումներով մոտ է հայոց Փոքր Մհերի կերպարին: Բայց և այնպես հայ-վրացական վիպական կապերում ևս հնարավոր են նոր ու հետաքրքիր բացահայտումներ (*Ս. Հարությունյան, Լ. Ղռեջյան*): Ավելի քիչ են ուսումնասիրված հայկական և հյուսիսկովկասյան էպոսների կապերը, որոնք, կարելի է ասել, նշանակալի են (*Ա. Աջիև, Մ. Մահոմեդով, Ե. Բեսոլովա, Ա. Պետրոսյան*):*

*Բացի հիմնական՝ հայ-կովկասյան առնչությունների հարցից, գիտաժողովում հնչեցին զեկուցումներ՝ նվիրված վրացական և կովկասյան էպոսների համեմատական ուսումնասիրության (*Ց. Բարամիձե, Խ. Մամիսմեդիշվիլի*), և հայկական ու կովկասյան էպոսների ուսումնասիրության առանձին հարցերի (*Ն. Չույակովա, Ի. Մունաև, Շ. Սալաքայա, Զ. Ջապուա, Ա. Պողոսյան, Թ. Հայրապետյան, Ե. Զաքարյան, Ա. Սահակյան, Հ. Մարտիրոսյան *և այլք*):*

*Գիտաժողովի զեկուցումները ներկայացված էին ըստ հետևյալ գիտական ուղղությունների՝ բանագիտական (զեկուցումների մեծամասնությունը), գրականագիտական (*Ա. Եղիազարյան, Պ. Քաուի, Ս. Ավետիսյան, Գ. Խաչատրյան, Վ. Եղիազարյան*), ուրարտագիտական (*Ս. Հմայակյան*), երաժշտագիտական (*Ա. Փահլևանյան*), արվեստաբանական (*Մ. Հմայակյան*):*

Գիտաժողովն անցավ գիտական բարձր մակարդակով և արժանացավ մասնակիցների բարձր գնահատականին: Այն, կարելի է ասել, որոշ առումներով նոր խոսք էր մեր տարածաշրջանային ուսումնասիրություններում: Ավելին, կարելի է վստահաբար ասել, որ տարածաշրջանի էպոսագիտությունը, ինչպես և հայ ու կովկասյան էպոսների համեմատական ուսումնասիրությունը, այս գիտաժողովից հետո նոր թափ կստանա:

Եվս մեկ հարց, որի մասին արժեր խոսել: Գիտաժողովը ցույց տվեց հյուսիսկովկասյան գիտնականների՝ Հայաստանի և հայկական գիտության հետ կապեր ստեղծելու ձգտումը: Կովկասյան բոլոր մասնակիցների կողմից ցանկություն արտահայտվեց նման գիտաժողովների հենց Հայաստանում ավելի հաճախ կազմակերպման վերաբերյալ: ԽՍՀՄ կործանումից հետո հայ-կովկասյան կապերը, կարելի է ասել, վերին աստիճանի թուլացել են: Մինչդեռ մեր հարևան երկրները՝ Վրաստանը և Ադրբեջանը, ապա և Թուրքիան դրանք կարողացել են պահպանել, զարգացնել և ստեղծել նոր կապեր: Կովկասյան թեմայով և մասնակիցներով գիտաժողովները ու գիտական այլևայլ հանդիպումներն այնտեղ մշտական են: Ընդ որում, Ադրբեջանը (և թերևս ոչ միայն Ադրբեջանը) Հյուսիսային Կովկասում որոշակի հակահայ քաղաքականություն է վարում նաև այդ ուղղությամբ: Այսպիսով, նման գիտաժողովների կազմակերպումը մեր գիտության և պետության համար կարող է ունենալ նաև քաղաքական որոշակի նշանակություն:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ